Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
փետրվարի 16-ի N 142 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՍՊԱՆԴԻՑ ԳՈՅԱՑԱԾ ՄԹԵՐՔԻ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՐՈՇՄՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կարգով կարգավորվում են գյուղատնտեսական կենդանիների սպանդից գոյացած մթերքի՝ իրացման և վերամշակման համար նախատեսված մսեղիքի, կիսամսեղիքի և քառորդ մսեղիքի (այսուհետ՝ միս) և որսի կենդանիների սպանդից գոյացած մսեղիքի անասնաբուժական դրոշմման (այսուհետ՝ դրոշմում) հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***մսեղիք***՝ սպանդի ենթարկված կենդանու մարմինն ամբողջական, առանց մաշկի, գլխի, վերջավորությունների ստորին հատվածների և ներքին օրգանների.

2) ***կիսամսեղիք***՝ մսեղիքի ողնաշարի երկարությամբ հավասարաչափ հատվածների բաժանված մասերը.

3) ***քառորդ մսեղիք***՝ մսեղիքի չորս մասի բաժանված հատվածները:

3. Դրոշմումն անասնաբուժասանիտարական փորձաքննության արդյունքների հիման վրա կատարում են անասնաբուժասանիտարական փորձաքննություն, ինչպես նաև կենդանիների սպանդ իրականացնող անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք:

4. Անասնաբուժասանիտարական դրոշմումը հավաստում է մսի անվտանգությունը և պիտանիությունը:

5. Դրոշմման համար կնիքները պատրաստվում են բրոնզից, ռետինից, չժանգոտվող այլ նյութից:

6. Անասնաբուժասանիտարական դրոշմը 1,0-1,5 մմ խորությամբ փորագրված շրջագծով է և ներառում է անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը (անվանումը) կամ հիվանդության անվանումը և կենդանու տեսակը, ինչպես նաև «ԱԲՍՓ» հապավումը:

7. Դրոշմումը պետք է լինի հստակ, ընթեռնելի և պահպանվի մսի պահման ժամանակ:

8. Դրոշմման համար օգտագործվում են միայն սննդային ներկերը:

II. ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՐՈՇՄՆԵՐԸ

9. Անասնաբուժական դրոշմներն են՝

1) 25 x 40 մմ և 40 x 60 մմ չափսերի ձվաձև դրոշմները, որոնցով հաստատվում են անասնաբուժասանիտարական փորձաքննության լիարժեքությունը, ինչպես նաև՝ այն, որ միսը ենթակա է իրացման՝ առանց սահմանափակման: 25 x 40 մմ չափսի ձվաձև դրոշմն օգտագործվում է ճագարի, նապաստակի, թռչնի, կուղբի, ճահճակուղբի մսի դրոշմման (N 1 ձև), իսկ 40 x 60 մմ չափսի ձվաձև դրոշմը՝ մյուս տեսակների գյուղատնտեսական և որսի կենդանիների մսի դրոշմման համար (N 2 ձև).

2) 40 x 70 մմ չափսի ուղղանկյունաձև դրոշմով հաստատվում է, որ միսը ենթակա է օգտագործման՝ վնասազերծումից հետո: Այդպիսի դրոշմի կենտրոնում նշված մեծատառերը պարզաբանում են հիվանդության անվանումը (դաբաղ, ֆիննոզ, տուբերկուլյոզ և այլն), որի դեպքում միսը ենթակա է վնասազերծման՝ համապատասխան եղանակով (եփում, սառեցում, երշիկի ստացում, պահածոյացում, հալեցում՝ ճարպի համար, օգտահանում և այլն) (N 3 ձև).

3) 20 x 50 մմ չափսի ուղղանկյունաձև դրոշմով հաստատվում է կենդանատեսակի մսեղիքը (տավարի, խոզի, ոչխարի, այծի, ձիու, ուղտի, եղջերուի, եղնիկի, վարազի, փորսուղի, ճագարի, կուղբի, ճահճակուղբի և այլն) (N 4 ձև):

III. ՄՍԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՐՈՇՄՈՒՄԸ

10. Մսի անասնաբուժական դրոշմումը կատարվում է հետևյալ կերպ՝

1) կենդանու մսեղիքի կամ կիսամսեղիքի վրա դրվում է մեկական դրոշմ՝ յուրաքանչյուր թիակի և ազդրի հատվածում.

2) կենդանու քառորդ մսեղիքի վրա դրվում է մեկական դրոշմ՝ յուրաքանչյուր քառորդի թիակի կամ ազդրի հատվածում.

3) ճագարի, նապաստակի, կուղբի, ճահճակուղբի մսեղիքի վրա դրվում է մեկական դրոշմ՝ թիակի հատվածում և ազդրի արտաքին մակերեսին.

4) օգտահանման ենթակա մսի վրա համապատասխան դրոշմը դրվում է առնվազն 3-4 տարբեր մասերում:

11. Կրկնակի անասնաբուժասանիտարական փորձաքննության ենթարկված միսը ենթակա է կրկնակի դրոշմման՝ սույն կարգի 9-րդ կետով սահմանված համապատասխան դրոշմով, որը կսահմանի դրա հետագա օգտագործման հնարավորությունը:

12. Թռչնի և ճագարի մսի փաթեթավորման դեպքում օգտագործվում են վարդագույն և կանաչ թղթյա պիտակներ՝ 15 x 90 մմ չափերով: Պիտակի ներկված մասի երկարությունը պետք է լինի 60 մմ: Պիտակի վրա նշվում է սպանդ իրականացրած կազմակերպության անվանումը:

13. Անհատական պոլիմերային թաղանթներով ճագարի և բրոյլեր տեսակի ճագարի մսեղիքի փաթեթավորման դեպքում մսեղիքը չի կնքվում, իսկ դրոշմումը կատարվում է փաթեթի մեջ դրված կամ սոսնձված պիտակի վրա՝ նշելով այն բոլոր տեղեկությունները, որոնք համապատասխանում են նշված արտադրանքին՝ համաձայն նորմատիվ փաստաթղթերի պահանջների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԴ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

Դ Ր Ո Շ Մ

ՃԱԳԱՐԻ, ՆԱՊԱՍՏԱԿԻ, ԹՌՉՆԻ, ԿՈՒՂԲԻ, ՃԱՀՃԱԿՈՒՂԲԻ ՄՍԻ

Ձվաձև դրոշմ՝ 25 x 40 մմ չափսի, 1 մմ լայնությամբ շրջանակով, վերևում՝ անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը կամ անվանումը՝ 6 մմ բարձրությամբ տառերով, ներքևում՝ 3 մմ բարձրությամբ մեծատառերով «ԱԲՍՓ» հապավումը (անասնաբուժասանիտարական փորձաքննություն)



Ձև N 2

Դ Ր Ո Շ Մ

ԲԱՑԻ ՃԱԳԱՐԻՑ, ՆԱՊԱՍՏԱԿԻՑ, ԹՌՉՆԻՑ, ԿՈՒՂԲԻՑ, ՃԱՀՃԱԿՈՒՂԲԻՑ՝ ՄՅՈՒՍ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՈՐՍԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄՍԻ

Ձվաձև դրոշմ՝ 40 x 60 մմ չափսի, 1,5 մմ լայնությամբ շրջանակով, վերևում՝ անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը կամ անվանումը՝ 12 մմ բարձրությամբ տառերով, ներքևում՝ 6 մմ բարձրությամբ մեծատառերով «ԱԲՍՓ» հապավումը (անասնաբուժասանիտարական փորձաքննություն)



Ձև N 3

Դ Ր Ո Շ Մ

ՎՆԱՍԱՁԵՐԾՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՄՍԻ

Ուղղանկյունաձև դրոշմ՝ 40 x 70 մմ չափսի, 1,5 մմ լայնությամբ եզրագծով, վերևում՝ անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը կամ անվանումը՝ 7 մմ բարձրությամբ տառերով, ներքևում՝ 7 մմ բարձրությամբ մեծատառերով՝ հիվանդության անունը (օրինակ, ԴԱԲԱՂ)



Ձև N 4

Դ Ր Ո Շ Մ

ԿԵՆԴԱՆԱՏԵՍԱԿԻ ՄՍԵՂԻՔԻ

Ուղղանկյունաձև դրոշմ՝ 20 x 50 մմ չափսի, 1,5 մմ լայնությամբ շրջանակով, վերևում՝ անասնաբուժասանիտարական փորձաքննություն իրականացնողի անունը, ազգանունը կամ անվանումը՝ 7 մմ բարձրությամբ տառերով, ներքևում՝ 5 մմ բարձրությամբ մեծատառերով՝ կենդանատեսակը (օրինակ, ԱՅԾ)